# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 22 | Օգոստոս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 22 | Օգոստոս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 2276413360 |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի** | |
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձ

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՍԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզ. հարկ | Այդ թվում՝ ավելաց. արժեքի հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55200119բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

22/08/2019 10:24:44

## ՈՐՈՇՈՒՄ

*Հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն նշանակելու մասին*

*26 մարտի, 2019թ.*

*ք. Ալավերդի*

*ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Դ.Խաչատրյանս, վերանայելով վարույթիս թիվ 55200119 քրեական գործի նյութերը.*

## ***ՊԱՐԶԵՑԻ***

*2018 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 03:25-ին, <<Հարավ կովկասյան երկաթուղի>> ՓԲ ընկերության անվտանգության ծառայությունից ահազանգ է ստացվել ոստիկանության Թումանյանի բաժնում այն մասին, որ Սանահին կայա-րանի մոտ գնացքի տակ մարդ է ընկել:*

*Ահազանգի կապակցությամբ նախապատրաստված նյութերով 2019 թվականի հունվարի 29-ին որոշում է կայացվել հանցագործության դեպքի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:*

*Ահազանգի կապակցությամբ նախապատրաստված նյութերով պարզվել է, որ Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասի 44-րդ շենքի 53-րդ հասցեում հաշվառված, փաստացի Հարավ կովկասյան երկաթուղու 2611-րդ կիլոմետրի 9-րդ պիկետի հարևանությամբ գտնվող այգետնակում միայնակ բնակվող Արտյոմ Արեստակի Միքայելյանը /ծնված՝ 15.04.1935թ./, ունեցած առողջական խնդիրների պատճառով կյանքին վերջ տալու նպատակով, 2018 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 03:07-ի սահմաններում, Հարավ կովկասյան երկաթուղու 2611-րդ կիլոմետրի 9-րդ պիկետի մոտ իրեն նետել է Երևան-Թբիլիսի ուղևորատար էլեկտրագնացքի տակ և ինքնասպան եղել:*

*Կատարված դեպքի վայրի զննությամբ Արտյոմ Միքայելյանի այգետնակի ննջասենյակում հայտնաբերվել և վերցվել է Արտյոմ Միքայելյանի անվամբ ձեռագիր գրառմամբ փաստաթուղթ՝ այն բովանդակությամբ, որ նա ոտքերի ցավի պատճառով այլևս չի կարողանում դիմանալ և իր մահվան մեջ որևէ մեկին չմեղադրեն:*

*Համաձայն Արտյոմ Միքայելյանի դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 0464/դ եզրակացության՝ Արտյոմ Միքայելյանի մահվան անմիջական պատճառ է հանդիսացել կյանքի հետ անհամատեղելի կոպիտ մարմնական վնասվածքները, որը պայմանավորված է եղել գանգի բաց, պարանոցի, կրծքավանդակի, որովայնի փակ, զույգ ստորին վերջույթների համակցված պոլիտրավմայի, գլխի դիմային շրջանի ամբողջական փափուկ հյուսվածքների, օրգանների, ոսկերի բացակայությամբ /անդահատումների/, գանգիթաղային և հիմի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքների, հյուսվածքների, ոսկրերի բացակայությունների, ջնջխումների և արյունազեղումների, ուղեղանյութի արտանկման, փափուկ հյուսվածքների և ոսկրերի արտահայտված դեֆեկտների, պարանոցի, կրծքավանդակի ենթամաշկային փափուկ հյուսվածքների, օրգանների, որովայնի օրգանների դրունքների արյունազեղումների, սալքարդի, աջից 1-ից 7-րդ և 1-ին, 2-րդ կողերի ուղղակի կոտրվածքների, միջկողային մկանների, առպատային պլևրայի, թոքահյուսվածքիարյունազեղումների, ջնջխումների և պատռվածքների, երկկողմանի հեմոթորաքսի, ներքին օրգանների դրունքների արյունազեղումների, աջ ոտնաթաթի՝ սրունք-թաթային հոդի մակար-*

[illegible], ձախ ոտնաթաթի առաջին մատի հիմային ֆալանգի մակարդակով բացակայությունների /անդամահատումների/, աջ ազդոսկրի բազմաբեկորային փակ կոտրվածքների, հարակից փափուկ հյուսվածքների ճզճխումների և արյունազեղումների, ներքին օրգանների սակավարյունության, մարմնի և վերջույթների քերծվածքներով:

Արտյոմ Միքայելյանի դիակի դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերվել են՝ գլխի դիմային շրջանի ամբողջական փափուկ հյուսվածքների, օրգանների, ոսկրերի, աջ ոտնաթաթի՝ սրունք-թաթային հոդի մակարդակով, ձախ ոտնաթաթի 1-ին մատի հիմային ֆալանգի մակարդակով բացակայություններ /անդամահատումներ/, մարմնի և վերջույթների ցրված քերծվածքներ, գանգի թաղային և հիմի ոսկրերի բազմաբեկոր կոտրվածքներ, հյուսվածքների, ոսկրերի բացակայություններ, ճզճխումներ և արյունազեղումներ, ուղեղանյութի արտանկում՝ փափուկ հյուսվածքների և ոսկրերի արտահայտումներ, դեֆեկտներ, պարանոցի, կրծքավանդակի ենթամաշկային փափուկ հյուսվածքների, օրգանների, որովայնի արգանների դռունքների արյունազեղումներ, փափուկ հյուսվածքների սալջարդ, աջից 1-ից 7-րդ և ձախից 1-ին, 2-րդ կողերի ուղղակի կոտրվածքներ, միջկողային մկանների, առպատային պլևրայի, թոքահյուսվածքի արյունազեղումներ, ճզճխումներ և պատռվածքներ, երկկողմանի հեմոթորաքս, ներքին օրգանների դռունքների արյունազեղումներ և սալջարդ, աջ ազդոսկրի բազմաբեկորային փակ կոտրվածք, հարակից փափուկ հյուսվածքների ճզճխումներ և արյունազեղումներ, ներքին օրգանների սակավարյունություն:

Նշված բոլոր վնասվածքներն հասցվել են կենդանության օրոք, բութ, կոշտ առարկաներով, չի բացառվում դրանց առաջացումը ներկայացված հանգամանքներում՝ մարմինը ռելսերի վրա ընկնելու և գնացքը մարմնի վրայով անցնելու հետևանքով, կենդանի անձանց մոտ ունեն առողջության ծանր վնասի հատկանիշներ և մահվան հետ գտնվում են անմիջական պատճառական կապի մեջ:

2019 թվականի փետրվարի 1-ին Լոռու մարզի դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը որոշում է կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով և 241-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 55200119 քրեական գործ հարուցելու մասին, որը նախաքննություն կատարելու նպատակով նույն օրն ուղարկվել է Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք կարևոր հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահոգեբանական և դատահոգեբուժական բնագավառի մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-248-րդ հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԳԱԱ <<Փորձաքննությունների ազգային բյուրո>> ՊՈԱ կազմակերպության /առաջնային/ և <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացնել սույն որոշման օրինակը և քրեական գործի նյութերը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել Արտյոմ Միքայելյանն իր մահվանը նախորդող ժամանակահատվածում:

բ/ Որոնք են եղել Արտյոմ Միքայելյանի հոգեկան, հուզակամային, մտածողական ընդունակության, դրդապատճառների հիմնական հոգեբանական, ինչպես նաև առողջական վիճակի առանձնահատկությունները, որոնք կարող էին ազդել նրա վարքագծի վրա:

գ/ Արդյոք Արտյոմ Միքայելյանը մահվանը նախորդող ժամանակահատվածում գտնվել է այնպիսի հոգեբանական վիճակում, որը նրան նախատրամադրեր ինքնասպանության, եթե՝ այո, ապա ինչը, ինչի հետևանքով կարող էր այդ վիճակն առաջանալ:

դ/ Արդյոք եղել է պատճառական կապ Արտյոմ Միքայելյանի մահվանը նախորդած ժամանակահատվածում հոգեկան վիճակի և վերջինիս կողմից ծանր հիվանդությամբ տառապելու հանգամանքի միջև:

ե/ Հնարավոր է արդյոք, որ Արտյոմ Միքայելյանը, ծանր հիվանդությամբ տառապելու, կամ այլ արտաքին և ներքին սոցիալ-հոգեբանական ազդակների հետևանքով հայտնվեր հոգեբանական այնպիսի իրավիճակում, որ կորցներ իրականության զգացողությունը, ինչն էլ հանգեցներ կյանքին ինքնասպանությամբ վերջ տալու գաղափարին:

զ/ Արդյոք եղել է պատճառական կապ Արտյոմ Միքայելյանի մահվանը նախորդած ժամանակահատվածի հոգեկան վիճակի և որևէ անձի կամ անձանց գործողությունների միջև, եթե՝ այո, ապա ինչպիսի բնույթ է այն կրել և ինչում է արտահայտվել:

է/ Արտյոմ Միքայելյանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե՝ այո ապա ինչպիսի:

ը/ Եթե Արտյոմ Միքայելյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ ունեցել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, ապա վերոհիշյալ դեպքի պահին դրանք զրկել են նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակություններից,թե ոչ:

թ/ Վերոհիշյալ դեպքի պահին Արտյոմ Միքայելյանն ունեցել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, թե ոչ:

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետին նախազգուշացնել նրան տրամադրված քրեական գործի, նյութերի, իրեղեն ապացույցների պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակվելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

**Ավագ քննիչ՝** [signature] **Դ. Խաչատրյան**